

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Շրջանը («Հոգեմետ կյուրերի չարաշահման կանխարգելում և վերահսկում» կամ SAPC), դրա բուժում մատակարարողների ցանցը և առողջապահության այլ մասնագետներ գործում են համաձայն այն կանոնակարգերի, որոնք պաշտպանում են Ձեր տվյալների գաղտնիությունը և, անհրաժեշտության դեպքում, Ձեր ինքնությունը: Բոլոր մատակարարները, որոնք պայմանագիր են կնքում Շրջանի (SAPC) հետ, պարտավոր են սահմանել գաղտնիության հետ կապված քաղաքականություններ ու ընթացակարգեր և գործել համաձայն Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի՝ Վերնագիր 42, Գլուխ I, Ենթագլուխ Ա, Մաս 2-ի (42 CFR Մաս 2), Բժշկական ապահովագրության փոխանցելիության և պատասխանատվության ակտի (HIPAA) ստանդարտների և Կալիֆորնիայի նահանգային օրենքի, որոնք վերաբերում են Ձեր բժշկական տվյալների՝ ներառյալ ավրոհողի և թմրամիջոցների օգտագործման մասին տեղեկատվության գաղտնիությանը:

Դուք իրավունք ունեք գաղտնի պահել Ձեր բժշկական տվյալները (medical records): Եթե Դուք ծառայություններ եք փնտրում կամ ստանում թմրամիջոցների կամ ավրոհողի հետ կապված խնդիրների համար, Դուք ունեք լրացուցիչ պաշտպանություն, որպեսզի կարողանաք ապահով և գաղտնի կերպով փնտրել բուժման և վերականգնման ծառայություններ՝ առանց խարանի կամ հետապնդման վախի: Ձեր բժիշկը, բուժում մատակարարողը կամ Շրջանը (SAPC) չեն կարող տեղեկացնել չարտոնված անձանց, այդ թվում՝ Ձեր ընտանիքին, գործատուներին կամ նույնիսկ ոստիկանությանը՝ առանց վավերական դատարանի որոշման, որ Դուք դիմել եք բուժման համար կամ ստանում եք բուժում՝ կապված թմրամիջոցների օգտագործման հետ: Պաշտպանված է ցանկացած տեղեկություն, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ճանաչելի դարձնել Ձեզ որպես ներկայումս կամ անցյալում թմրամիջոցների կամ ավրոհողի հետ խնդիրներ ունեցող անձ կամ որպես բուժման ծրագրի մասնակից:

Սակայն կարևոր է հավասարակշռել այս օրենքներն ու կանոնակարգերը և Ձեզ տեղեկացված, համակարգված և ամբողջական ինսամբ տրամադրելու անհրաժեշտությունը: Ձեր մատակարարը կարող է խնդրել Ձեզ ստորագրել հիվանդի տվյալները փոխանցելու և/կամ համաձայնության ձևեր, որոնք կարող են ներառել

բժշկական համակարգում կլինիկական տեղեկատվությունը համապատասխան մատակարարներին տրամադրելու իրավունքը: Ըստ անհրաժեշտության սա ներառում է բուժման ցանցի այլ մատակարարներին, Ձեր բժշկական ապահովագրությունը (օրինակ՝ Anthem Blue Cross, Health Net, Kaiser Permanente, L.A. Care, Molina Health Care) կամ նշանակված բժիշկ(ներ)ին և Շրջանի այլ գործակալություններ: Նպատակն է օգնել բոլորին ավելի լավ հոգ տանել Ձեզ համար և օգնել Ձեզ հասնել Ձեր առողջության և վերականգնման հետ կապված նպատակներին:

Նախքան Ձեր բժշկական մատակարարը Ձեր առողջության մասին տեղեկությունները կտրամադրի մեկ ուրիշին, Դուք պետք է գրավոր համաձայնություն տաք՝ սովորաբար ձևաթուղթ ստորագրելով: Կան դեպքեր, երբ Ձեր բժշկական մատակարարը կարող է տրամադրել տեղեկություններ, որոնք կարող են Ձեզ ճանաչելի դարձնել որպես հիվանդ՝ ներառյալ շտապ բժշկական օգնության դեպքերում, երբ հաղորդում են տալիս հանցագործությունների մասին, որոնք տեղի են ունենում ծրագրի տարածքում կամ անձնակազմի դեմ, կամ երբ տեղեկություններ է տրամադրում որակավորված սպասարկող կազմակերպություններին:

Կարևոր է, որ Դուք հասկանաք գաղտնիությանը վերաբերող Ձեր իրավունքի սահմանն ու շրջանակը: Նախքան որևէ համաձայնություն ստորագրելը անպայման տվեք անհրաժեշտ հարցերը, որպեսզի տրամադրեք տեղեկացված համաձայնություն: